Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայոց Բանակի օրվա առիթով Հայրապետական Մեր ողջույնն ու օրհնությունն ենք բերում ի սփյուռս աշխարհի համայն մեր ժողովրդին և Մեր բարեմաղթանքներն ու շնորհավորանքները՝ մեր քաջարի բանակի զորավարներին և մարտիկներին:

Փառք Բարձրյալին, որ խաղաղ երկնքի ներքո, մեր բանակի պաշտպանությամբ ապահով՝ մեր ժողովուրդը շարունակում է իր ստեղծարար կյանքը՝ վերածնվող Հայաստանի ու Արցախի վաղվա նոր օրը կառուցելու լուսավոր հույսով ու հավատով:

Մեր դժվարին պատմության վճռական պահերին հայոց բանակը միշտ դրսևորել է ազատատենչ ու քաջակորով ոգի և մեծ հաղթանակների հասել առ Աստված հավատքով, ամենահաղթ արիությամբ ու խիզախությամբ: Այսօր մենք հիշում ենք հայ զենքի փառքը կերտած մեր պանծալի զորավարներին ու անմահ հերոսներին, ովքեր նվիրվեցին Հայրենիքի ազատության ու անկախության վեհ և նվիրական գործին:

Հայրենիքի սիրո և Հայրենիքին ծառայության խորհուրդը մեր հոգում՝ աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ հայցելով, որ Ամենակալ Տերը Իր Ամենախնամ Աջի հովանին տարածյալ պահի հայոց զորաց ու զորականաց վրա, միշտ զորեղ պահի բազուկը ու հաղթական՝ ոգին հայ զինվորի:

Թող Տերը անվրդով պահպանի երկնառաք խաղաղությունը աշխարհում համայն, հայրենի մեր եզերքներում՝ ի Հայաստան և ի Արցախ:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
27 հունվարի 2005 թ.